

սկսում են նոցա պարագմունքները —լինում են կամ դասախոսութիւններ և կամ զործնական պարագմունք կրօնից (3 զառ) պատմութիւնից եկեղեցու, երգեցողութիւնից, մուզիկայից և եկեղեցական գրագրութիւնից ևայլն: Պարագմունքից յետոյ 1 ժամ 15 րոպէին լինում է ճաշ, ապա հանդիսաւ: Ժամը 4-ին զնում են երեկոյեան ժամերգութեան մասնակցելու և ապա մինչեւ ժամը 9 երեկոյեան զբաղում են իրենց պարագմունքներով: Կուրսիստների պահպանութեան համար թեմի վիճակային գումարից յատկացուած է որոշ գումար, իսկ իւրաքանչիւր սովորող վճարում է իւր սեպհական միջոցներից ամսական 25 ռուբլի 7 ռուբլի էլ անկողնուծախս, իսկ 3 ռուբլի էլ մուզիկայի համար:

Ելապիսով Օմսկի արքեպիսկոպոսի բարի նպատակն է միջոց տալ՝ որ թեմի քահանաները ունենան աւելի կրթուած և պահանջուած եկեղեցական զործնական գիտելլիքներով օժտուած սազմոսացներ: Իսկապէս սազմոսասացն ամենակարենոր օգնականն է քահանայի, առանց որի վերջինս ծիսակատարութեանց ժամանակ մեծ նեղութիւններ կարող է կրել: Իսկ իւրաքանչիւր իւր կոչման բարձրութեան վրայ կանգնած քահանայ կաշխատի ունենալ վերջիշեալ պատրաստութեան տէր օգնականներ: Զէ՞ որ սազմոսասացն եկեղեցում կարգում և երգում է ի դէմս ներկայ եղող ժողովրդեան՝ հետևապէս նախ նա պէտք է կարդայ գեղեցիկ առողանութեամբ և միանգամայն հասկանալի: Ինչպիսի բարյական յատկութիւններ պահանջում է քահանայից՝ նոյնը պէտք է երևայ նաև սազմոսասացի մէջ, չէ՞ որ երկուսն էլ կոչուած են Աստուծոյ տաճարում ծառայելու և բարի օրինակ լինելու ժողովրդեան:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կաթոլիկ եպիսկոպոսների հոգացողութիւնը բարերի մաքրութեան մասին: Դերմանական եպիսկոպոսների հոգուական թղթերը, որոնք հրատարակուեցին Յուլիսում վերջին համագումարի ժամանակ, սուրբ Բոնիֆացիայի վերեկմանի մօտ, վերաբերում են ընտանիքի և երեխաների դաստիարակութեան վերաբերեալ հարցերին: Վերջին ժամանակներում Գերմանիայում իւրաքանչիւր տարի ծննդների թուերի յաջորդաբար սահմանափակումն իւր վրայ գարձրեց նաև եկեղեցու հայրերի ուշադրութիւնը: 1876 թ. Գերմանիայում 1000 մարդուն գալիս էր 42 ծնունդ, իսկ 1911 թ. միայն 29: Այդպիսի տիտուր և վտանգ սպառնացող երկոյթի զլիսա-

որ պատճառը եպիսկոպոսները տեսնում են ամուսինների չար կամքի մէջ, որ նոքա ամուսնութեան վրայ նայում են իրենց կըրքերին բաւականութիւն տալու անսակէտից, խուսափելով ռանենալ երեխաններ, այդպիսով յանցաւոր կերպով ոչնչանում է Աստուծոյ ստեղծագործական կամքը և ամուսնութեան գլխաւոր նպատակը:

Եպիսկոպոսները պարտք են համարում բարձրացնել իրենց ձայնը այդ սոսկալի չարիքի դէմ: Նոքա բացարարում են՝ որ ամուսնութեան գլխաւոր նպատակն է—ընտանիք կազմելը, երիխաններին կեսնք բաշխելը, մարդկային ցեղի բազմացումն. և նախատելով յանուն Քրիստոսի՝ յորդորում են բոլոր ծնողներին հաւատարիմ մնալ իրենց ամուսնուկան պարտականութիւններին և խոյս չտան շատ երեխաններ ունենալուց, յուսալով առ Աստուծած նրանց պահպանութեան համար: Իրենց խրանները չկատարողներին սպանում են զրկել սուրբ հաղորդութիւնից: Այսուհետեւ եպիսկոպոսներն իրենց ձայնն են բարձրացնում ի պաշտպանութիւն երեխանների: Նոքա հրաւէք են կարգում քրիստոնեայ մայրերին չըրկել երեխաններին իրենց մայրական կաթից: Նախազգուշացնում են ժամանակից առաջ իրենց երեխաններին գաղափար չտալ սեռական կեանքի մասին, ընդհակառակը աշխատել նրանց մէջ փոքր հասակից զարթեցնել ամօթիւածութիւնը: Խորհուրդ են տալիս հեռու պահել երեխաններին բոլոր զայթակղեցուցիչ բաներից, և նրանց մէջ միծ չափով զարթեցնել սէք առ Աստուծածինը, որը հովանաւորող է երիտասարդ սրտերի մաքրութեան: Վերջապէս եպիսկոպոսները կանանց և աղջիկների ուշազգորութիւնն են հրաւիրում հագուստների վնասակար մօղանների վրայ, որ նոքա անպատճան ձևերով հագուստներ են հագնում: Վերջում նոքա բացատրում են՝ որ բարքերի աղականութիւնը առաջ է եկել կրօնական կեանքի անկումից:

Բեղջիայում եպիսկոպոսները միահամուռ բողոք են ուզգել բոլոր ծնողներին երեխանների դաստիարակչական վատ ուղղութեանց մասին, որ նկատումէ նոցա արգուզարդի և պարերի վատ տեսակների վերաբերմամբ: Ֆրանսիայում և Իտալիայում եպիսկոպոսները համերաշխ կերպով բողոքել են վերջերս տարածուած «Տանգօ» պարի դէմ, որ առաջ է եկել Արգենտինայից, որտեղ տարածուած է ազգաբնակութեան ստորին խաւերում: Այդ «տանգօ» պարը համարում են անբարոյականութեան նպաստող, որին մասնակցել չպէտք է թոյլ տայ իւրաքանչիւր քրիստոնեայի խր խիղճը:

Պարտադիր հաղաքացիական պսակի նախագիծը Իւսլական պարլամենտում, Խոտալական կառավարութիւնը պալատ է մտցրել պարտադիր քաղաքացիական պսակի նախագիծը՝ որով իւրաքանչ չիւրը նախ քան պսակադրութեան եկեղեցական կարգի կատարումն պարտաւորէ քաղաքացիական պսակի օրէնքին ենթարկուել: Մինչև այժմ պետութիւնը չէ պահանջել քաղաքացիական պսակի կատարումն, բայց միենայն ժամանակ էլ ոչ մի եկեղեցական պսակ չէ ընդունել վաւերական:

Դործնական կեանքում այդ բանը առիթ է տուել շատ տխուր դէպքերի ամուսինների ու նոցա դաւակների համար, որովհետեւ այդպիսի ամուսնութիւնից ծնուած զաւակները իրաւունք չեն ունեցել ժառանգութեան, և մարդն էլ կարող էր ազատ և անպատիթ կերպով կնոջ թողնել և մի ուրիշի հետ օրէնքի առաջ վաւերական ճանաչուած քաղաքացիական պսակով ապրել: Եկեղեցական իշխանութիւնը տեսնելով այդ անյարմարութիւնները հրաւերել է բոլոր կաթոլիկներին նախ քան եկեղեցական կարգով պսակուելը դիմել քաղաքական իշխանութեան: Այդպիսի հրահանգութիւն պարունակում է նաև Պիոս X պապի հրամանով հրատարակած հաւատոյ հանգանակի մէջ: Բայց այնուամենայնիւ, երբ կառավարութիւնը պարլամենտ է մտցնում վերոյիշեալ օրինադիմը, եկեղեցու ներկայացուցիչները ձեական—ուկարունքայինն տեսակէտից հակառակ կարծիք են յայտնում դորա դէմ, չճանաչելով քաղաքական իշխանութեան նկատմամբ իրաւունք խառնուելու եկեղեցական պսակի խորհրդի կարգադրութեանց մէջ և հրատարակելու քահանաների համար այս մասին պարտաւորական օրէնքներ, քանի որ կառավարութիւնը չէ ընդունում եկեղեցական պսակը: Կաթոլիկ ժողովրդական միութիւնը սոյն տարրուայ փետրուարի մէկին ամբողջ Խտալիայում կազմակերպել է կաթոլիկների համադումար բողոքելու հոգևորականների ազատութիւնը խանգարելու դէմ:

Բ. վ. Ա.